

ՀԱՇՎԱԿ ՈՎԿԵԴԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԳԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՅԼՈՎՔՆ ՀԱՆԴԵՐՁ

Հ Ն Գ Ի Ն Ա Մ Ո Վ,

Ը. ՄԱՏԱԹԻԱՑ ԳՈՐԾՎԱՋԵՄՆ ԵՐ 8. ԳՈՒՐԳԵՆԻ

S U R E .

ԹԻՒ Զ. — Է ՅՈՒՆԵԱ



Խ. Ա. ՊՈԼԵԽ

Ա. Բ. Յ. Ա. Ա. Խ. Ա. Ե. Ա. Վ. Ա. Ա. Ա. Ա.

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՊԵՏՄԱՆ

Պատմութիւն Հայ մատենագրութեան Ա. Մ. Գ.

ԴԻՑՆԵԱԿԱՆ

Օդ համառարած . Յ. Գ.

ԲՈՆԵՍՍԵՐԱԿԱՆ

Ի Գրոց Տելեմաքայ Ա. Գ.

Թռուղը առ. Խեամակալութիւն Ա. Պալեան
Օրենք Եզիպտացւոց գատելոյ զբազանու յետ

մահուսն նոցա Ա. Մ. Գ.

Առանձինն բանք Հայերէն լեզուի (Պ.) Յ. Գ.



ՃԱՇԱԿԻ

ՊԱՍՏԵՎԱՆ ԴՊՅԱՄՔԵԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀԱՅ ՄԱՏԵԽԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲԱՆԵ ԱՆՏԻ ՄԻՒԶԵԻ ՅԱՌԱՋԻՆ ԿԵՍ ԱՆԴՐ Ե. ԴԱԲՈՒ

Մնայ ասել ինչ գհանգամանաց լեզուին բուզանդայ , և
այն իսկ է կէտ նապատակի մերոյ : Պատմութիւնն Հայերէն
դպրութեանց զոր վերագոյնն յիշեցաք՝ չասէ ինչ զլեզուէն
բուզանդայ . չիք տարակոյս սակայն թէ այս լոռութիւն չէ
արհամարհանաց կամ դուզնաքեայ ինչ համարելոյ զլեզու
ոսկեղինիկ մատենին : Որչափ օտար և համարիցիմք զարձակն
և զհամարձակ լեզու բուզանդայ ի պարզն և յողորկ կանո-
նաց արդի գրագիտութեան որ այնովէս պինդն է և սեղմ
և ամփոփ , և որչափ խորչելի թուիցին մեզ աւելորդն այն
առատութիւն և ստէպ կրկնութիւնք , և օձտելն և խոտո-
րել յօրինաց դպրութեան , չէ մարդ տակաւին ուրանալ թէ
մատեանն բուզանդայ , վասն լեզուին մանաւանդ , ի մնա-
ցորդս անդ դպրութեան Ոսկեղին դարուն է արդարեւ հրա-
շակերտ : Յորպիսի մեծութենէ մնայր թափուր հայերէնն առ
մեօք , եթէ զրկեալ էր զմեզ բախտին յականէ անտի պատ-
ռւականէ որում արդարեւ չբաւէ գին :

Բուզանդ այնու իմն մանաւանդ է անգին և անհամե-
մատ , զի , որպէս ասացաւ այլուր , տայ մեզ զօրինակ ժո-
ղովրդական լեզուի երանագոյն ժամանակի մերոց հայրե-
նեաց : Առ Բուզանդայ թուփ մեզ լաել զպերձն և զճոխ բար-
բառ արքունական որով խօսէին նախարարք մեր իբրեւ մտա-
նէին ի ժամ այգորելոյ առ արքայ . և կամ յորժամ , տաշտ
գինւոյ ի մատունա , ճառ արկեալ խօսէին զիրաց կարե-
ւորաց տէրութեանն ի գալ իւրեանց ի մի վայր : Չէ առանց

Հաւանութեան թէ գոռոզն Արշակ բուզանդեան լեզուաւ յայտնեաց զցասումն իւր առ նախարարս ընդ աքսորել Ներսիսի յարիանոս կայսերէն Վաղեսէ . « Քարինք բազումք , ասէ , ի վերայ կայսերն , և ձեր ի բերելդ . քարինք և մեր շատ կան ի թափել զատամունս նորա ի տալն (զպարգեւսն) և ձեր ի բերելդ . զմեր վատթարութիւնս յն տարայց . արդ այդմ երախտեացդ ես դարձուցանեմ : » Նովին լեզուաւ և Մուշեղ արդարացոյց զանձն առ Պապայ յանմիտ զրպարտութեանց անտի շաղաջուտ մարդոց . « Զիմ զընկերան զամենեսեան , ասէ , ես կոտորեցի . իսկ որ թագս ունէին՝ նոքա իմ ընկերք չէին , այլ քո . եկեսցես , որպէս ես զիմսն սպանի , դու զըսոյն . այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբեք որ թագ ունի , և ոչ ձգեմ , և մի այլ ձգել լիցի : Եթէ կամիս սպանանել զիս , սպան . այլ ես , եթէ գայ ինձ ի ձեռն երբեք այր թագաւոր , որպէս եկն բազում անգամ , ես ոչ սպանանեմ զայր թագաւոր որ գամ մի թագ ունի , եթէ ոք իսկ զիս սպանցէ : » Նովին լեզուաւ յղեցան պատգամք ի Մանուելէ առ Վարազդատ , և ի Վարազդատայ առ Մանուէլ , և այլ բազում ինչ զոր գնէ Բուզանդ ի բերանս ոմանց ոմանց նոյն ազատաշխարհիկ լեզուաւ : Առատն և փափուկ , նոր և անարուեստ , կամ մանաւանդ անպատճոյն լեզուն Բուզանդայ նշան է ոչ եթէ տգիտութեան Հայ լեզուի կամ խակութեան մատենագրական ոմոյ , այլ ժամանակին ժողովրդեան լեզուին , զոր քան զգիտնարար ոճ Եզնկայ և թարգմանութեան գործոյն Ասկերերանի և այլոց հարց թուի նախամեծար արարեալ մատենագրին , որոյ կէտ նպատակին էր առանց երկբայութեան առնել զգործն , իբրեւ տոհմային պատմութիւն , յանկագոյն ճաշակի ժողովրդեան . և այս բարձրացուցանէ մանաւանդ քան իջուցանէ զպատիւ և զգին լեզուին Բուզանդայ : Ըստ մեզ , մի միայն թերութիւն Բուզանդայ է ստէպն մուտ տալ նորասքանչից , և այս ոչ այնչափ Բուզանդայ անձին կամ գործոյն , որչափ ժամանակին է ընծայելի :

Եւ զի զամբաւ առաւելութենէ հայերենին Ե. դարու արդէն եղեն բանք միանգամ և երկիցս , աւելորդ համա-

թիմք խօսել միւսանգամ։ Քան զվարդապետութիւն լաւագոյն և հզօրագոյն է ապաքէն օրինակն։ Գրեթէ յամենայն գրոց զոր յիշեցաք վերագոյնն իբրև արդիւնս ոսկեղէն ժամանակի՝ բերցուք հատուածս իբրև առակ օրինակի, զի յետոյ ի բերել մեր հատուածս և ի մատենագրութենէ այլոց եւս դարուց, ի համեմատութենէ անտի երկոցունց դիւրին իցէ ընթերցողաց տեսանել՝ թէ ուր պարտ իցէ խնդրել զհայերէնն։

Աւելորդ համարիմք յաճախսել օրինակս յԱստուածաշունչ գրոց, որոց ընտրութիւնն և հարազատութիւն լեզուին է յամենեցունց վկայեալ, և ծանօթ՝ ի պատճառս ստէպ ընթերցուածոցն զորս յաճախեցին նախնիք մեր եկեղեցասէրք ի հանապազորդ պաշտամունս եկեղեցւոյ, և որոց ընտելացեալ են ականջք ռամկաց իսկ։ Բերցուք միայն հատուածս ինչ ի գրոց Մակարայեցւոց, յորոյ ի թարգմանութեանն հայ թարգմանիչն թափէ զմթերս առատութեան Հայ լեզուին՝ առանց կապելոյ զանձն ընդ բնագրին, այնուզի է մատեանն երկրորդականոն, և, իբրև այսպիսի, տայ աղատութիւն ելանելոյ ըստ սահման բան առ բան թարգմանութեան։

Ի պայազատացն Աղեքսանդրի մեծի թագաւորէ Անտիոքոս Եպիփանէս որդի Անտիոքայ մեծի յամին 174 նախ քան զբրիստոս, և հալածէ զհրեայս։

«Աղեքսանդր արքայ Մակեդոնացւոց . . . զօրաժողով լինէր և զաշխարհս ամենայն ի հարկի կացուցանէր։ Եւ յետ այսր զախտ մահու զերանէր և անկանէր ի մահիմս իւր։ Իրեւ ետես եթէ մեռանի, կոչեաց նա զզորեսին փառաւորեալս ի նմանէ որ ընդ նմա իսկ սնեալ էին ի մանկութենէ, և բաժանեաց ետ նոցա զարքայութիւն իւր, մինչդեռ ինքն կենդանի էր։ Յետ նորա զատեալ հաստատեցան կացին իւրաքանչիւր ի տէրութեան իւրում դայեկորդիքն նորա, թագ կապեցին և որդիք նոցա յետ նոցա ամս բազումն։ Ի նոցանէ բզիսէր արմատ չարի, չառաւիղ դառնութեան, որդին Անտիոքայ մեծի, անօրէնն Անտիոքոս երեւելի, որ էր մնացեալ ի պատանդս ի Հռոմ քաղաքի։ . . . Իբրև աջողե-

յաւ թագաւորութիւնն առաջի նորա , եղ ի մտի իւրում նա թագաւորել և ի վերայ երկրին Եգիպտացւոց միաբանել զերկոսին թագաւորութիւնն : Դիմեաց խաղաց գնաց նա զօրօք բազմօք , կառօք և փօք և նաւուք բազմօք տալ պատերազմ ընդ Պտղոմեայ (Ներեւելոյ) թագաւորին Եգիպտացւոց . ի պարտութիւն մատնեցաւ Պտղոմէոս յերեսաց նորա , փախստական լինէր առաջի նորա : Յայնմ մարտի բազում վիրաւորք անկանէին : Ասպատակ սփոհէր Անտիոքոս ընդ աշխարհն ամենայն . վաղ հասանէին զօրքն , արագ արագ զաւարն ժողովէին , և առնուին զամուրս ամենայն երկրին Եգիպտացւոց : Եւ յետ հարուածոց եգիպտացւոցն դարձաւ Անտիոքոս :

«Զհետ երկուց ամաց արձակեաց նա ի քաղաքսն Հրէաստանի իշխան հարկահան , որ եկն յերուսաղէմ զօրօք բազմօք : Անկաւ նա ի վերայ քաղաքին յանկարծակի և հարզնա ի հարուածս մեծամեծս : Սատակեաց ժողովուրդս բազում յիսրայելէ , առ զաւար քաղաքին , և հրձիգ արար զամենայն փայտակերտ զապարանից նորա , ի գերութիւն վարեաց զկանայս և զմանկունս և զամենայն անասունս նոցա : Ետ շինել զամրակողմն զգլուխ քաղաքին ի պարիսսպս ամուրս և յաշտարակս հզօրս . և եղեւ այն զօրուն իբրեւ բերդ ի բերդի : Անդք մուծին զարս անօրէնս , ամրացուցին լցին զնա զինու , հանդերձեցին լցին համբարօք , և զամենայն զօրն Երուսաղէմի ի ներքս կուտեցին : Եղեն յորդայթ մեծ . և ի խափան սրբութեանն և ի սատանայ չար տանն իսրայելի հանապազորդ : . . . Հրեշտակս արձակեաց թագաւորն հրովարտակօք հանդերձ յերուսաղէմ և ի քաղաքսն Հրէաստանի դարձուցանել զնոսս յօրէնս օտարոտիս , խափան առնել ողջակիզացն և պատարագաց , պղծել զշաբաթս և զտոնս տարեկանաց . նուիրեալ սեղանս կանգնել , երեւեցանել անդս մեհենից , յազել զիսոզ և խառնակ անասունս : Ստիպէր զՀրեայս թողուլ զորդիս իւրեանց անթըլիատս , զի մոռասացին նորա ամենեւին զօրէնսն . և որոշ կացցէ , ասէ , ի հրամանի թագաւորին՝ մահու մեռցի : Ետ նա շինել պատկեր պղծութեան ի վերայ սեղանոյն ,

ընդ ամենայն Հրէաստան շուրջ զքաղաքօք կանգնել մե-
հեանս , և ի վերայ ամենայն դրանց ապարանիցն և ընդ ամե-
նայն գնացս քաղաքացն խունկս արկանել : Զգիրս ամենայն
կտակարանացն զորս գտանէին՝ պատառէին և հուրբ կի-
զուին , և ուր առ ումեք գտանէին գիրք կտակարանաց ,
կամ թէ ուրեք ընդ օրէնս հաւասարէր՝ հրաման թագ-
աւորին զնա մահու սպանանէր : Եւ այնպէս սաստկացեալ
էր հրամանն ի վերայ Խրայելացւոց , զի զկանայս որոց
զմանկունսն իւրեանց թլփատեալ էր՝ սպանանէին ըստ
հրամանին , և զմանկունսն զպարանոցէ մարցն կախէին ըստ
հրամանին արքունի , և զմթլփատիչսն և զորդիս նոցա սպա-
նանէին ըստ նմին օրինակի : Եւ բազումք յԵրուսաղեմա-
ցւոցն պնդեցին զանձինս իւրեանց , յանձն առին յօժարու-
թեամբ մեռանել , և ոչ պղծել զանձինս իւրեանց ի խառ-
նակ կերակրոյ անտի : »

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Գ.

ԳԻՏՆԱԿԱՆ

ՕԴ ՀԱՄԱՏԱՐԱԾ

Յայտ ի փորձոյ իրաց է՝ թէ չիք օդոյ ոչ հոտ , ոչ համ
և ոչ գոյն , և է մարմին գաղեղէն . գոյնն կապոյտ որով ե-
րեւի օդ աչաց՝ երեւոյթ մի լուսոյ է . զի անգոյն տարերք
օդոյ զայլ այլով սաստկութեամբ ցոլացուցանեն զերփն երփն
երանգս ճառագայթից արեգական , և առաւել քան զայլ
ածեն ի տես աչաց մերոց զգոյնն կապոյտ : Այս իսկ է պատ-
ճառ՝ զի գոյն երկնից երեւի մեզ կապուտագոյն :

Օդ , հանգոյն ամենայն մարմնոց որ ի բնութեան , է մար-
մին կըռելի , այն է՝ ունի զծանրութիւն . այլ առ նախնիս ,
ոչ ընդ սակաւ ժամանակս , համարէր օդ որպէս բնութիւն
ինչ լցի և անկշիռ : Պիւթագորայ կարծիք էին՝ եթէ ան-
մաքուր իցէ օդն որ զմեօք պատէ , և ի վերայ այսր օդոյ
զոր ծծեմք՝ գոյ այլ իմն օդ սուրբ որ կոչի երեր : Զնոյն
խտիր արկ ի մէջ և Պղատոն , որպէս Ամբիտոկղէս և այլք

ի հնոց փիլիսոփայից . ոչ ոք ի նոցանէ առ ի միտ զտարրեղէն հանդամանս օդոյ , և ոչ ընծայէր ոք նմա պաշտօն իմն յերեւոյթս բնութեան :

Այլ թուի թէ Արիստոտ զառաջինն ած զմտաւ զկոռութենէ համատարած օդոյ , և վասն իրացն հաստատութեան փորձ փորձէր կշռել տիկ մի՝ նախ օդալից և ապա թափեալ յօդոյ . այլ վասն չաջողելց նմա փորձոյն , զի զնոյն կշուծանրութեան գտանէր հանապազ տիկն այն եւ յորժամ օդալիցն էր եւ յորժամ թափուր յօդոյ , Արիստոտ սակաւ մի ժամանակ հրաժարէր ի կարծեաց անտի իւրոց . քանզի թէպէտ առաւելցր ծանրութիւն տիկն վասն օդոյն ի ներքս մտանելոյ , այլ և ըստ ընդարձակելոյ ծաւալին նուազէր տիկն ի ծանրութենէ իւրմէ միակշիռ չափով ծանրութեան , ըստ վարդապետութեանն Արքիմեդեայ : Այս չաջողութիւն փորձոյ ած զԱրիստոտ ասել , իբրեւ զծմարտութիւն իմն ակնյանդիման , զայս բան անիմաստ՝ թէ բնութիւն երկնչի յունայնութենէ :

Այս վարդապետութիւն անհանձար , որ ընդունելի եղեւ հասարակաց , արգել լինէր սկիզբն առնելց անդրէն փորձոց որ մարթէին այլազգ իմն ի վեր բերել զիսնդիրն և երկիտութիւն արկանել զկարծեօք Արիստոտի : Յառաջ քան զԱրիստոտ , ի զուր Ամբիտոկղէս ասէր զծանրութենէ օդոյ լինել պատճառ առնոյ և տալոյ չնչոյ . « Օդ , » ասէր , « ազդեցութեամբ ծանրութեան իւրոյ խուժէ ի թոքս մեր : » Ընդ վայր ասէր Սակոնմիատ՝ թէ « Օդ առ ծանրութեանն մտանէ ի թոքս ուժգնութեամբ մեծաւ : » Այլ ոմն փիլիսոփոս ստոյիկեան անուանի , Փոսիտոնիսո անուն , — Փոսիտոնիոսն այն որ անկեալ յանհնարին ցաւս մարմնոյ՝ աղաղակէր . « Ովցաւ , վայրապար նեղես զիս . ոչ կարասցես ածել զիս ի հաւան չարիս ինչ համարել զքեզ , — գուն գնէր ընդունացն առ հաւանեցուցանել զգիտունս ժամանակին՝ թէ ծանրութիւն գոյ համատարած օդոյ , զորոյ և զչափ բարձրութեանն հաշռել կամեցաւ : Եւ այս ամենայն ջանք և կարծիք զիտնոց հնոցն ժամանակաց անկան ի մոռացօնս . այլ ընդ Միջին դարն ողջոյն որպէս մասն վարդապետութեան

կրօնից համարէր հաւատալ՝ թէ ննութիւն երկնչի յունայն նութենէ, և աննիւթ է օդ համատարած. զի որ ասացն զայս՝ Արխատոտ էր, և որ ընդգէմ ոք դառնայր վարդապէտութեան նորա կամ այլազգ ինչ ածէր զմուաւ՝ պատիժ նմա անդէն վաղվաղակի հասանէր՝ այրել կենդանւոյն ի վերայ փայտակուտի:

Ապա յետոյ որ ինչ ստուգութեամբ եկն ի յայտ զհամատարած օդոյ և զհանդամոնաց նորա՝ ծանօթ իսկ է ամենեցուն:

ՔՅՈ, ՀԱՆԵՑ,

Տ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի ԳՐՈՅ ՏԵԼԵՄԱՔԱՅ

Տարան հանին զմեղ առաջի Ակեստեայ, որ գաւազան ունկի ի ձեռին՝ դատէր գժողովուրդս և հանդերձեալ պատրաստէր ի գործ պաշտամոն զոհից: Բարկ և զայրագին իմն բարբառով հարցանէր զմեղ. Ո՞ւր է, ասէ, երկիր ձեր հայրենի և զի՞նչ կէտ նալատակի ճանապարհորդութեանն ձերոյ: Փութացաւ Մենտոր տալ նմա պատասխանի և ասէ. Եկեալ եմք յափանց անտի մեծին Հեսպերիտեայ, և երկիր մեր հայրենի չէ ինչ կարի հեռի անտի. և այսակս խորչէր խելօք յասելոյ թէ յոյն եմք: Ակեստէս ոչ եւս անսայր նմա և ունէր զմեղ առարս օտարականս որ թաքրուցանիցեն զծածկեալ խորհուրդս իւրեանց. և անդէն տայր հրաման տանել զմեղ ի մօտաւոր անտառն ուր ծառայել էր մեղ իբրև զգերիս որոց արածէինն զնօտս և զանդեայս նորա:

Դժնդակագոյն քան զմահ թուէր ինձ պայմանս այս, և ձայն բարձեալ գոչէի. Ո՞վ արքայ, տուր հրաման զի սպանցեն զմեղ քան թէ ընկիցիմք անարժանս. գիտասչիր զի Տելեմաք եմ ես, որդի խմատոնոյն Ողիսեայ, արքային Խթակեցւոց: Ծովս բաղումս հատեալ անցեալ խնդրեմ զհայրն իմ. և եթէ չէ ինձ հնար գտանել զնա, և ոչ դառնալ յեր-

կիրն իմ հայրենի և ոչ իսկ զերծանել ի գերութենէ աստի յայսմանէ , առ զարեւն իմ . ոչ կարեմ ես ժոյժ ունել տանել այդշափ դառն և ողորմելի կենաց :

Հազիւ ելանէին բանքս այսոքիկ ի բերանոյ իմմէ , խառնաղանձ մարդկանն զայրագին լի բարկութեամբ աղաղակ բարձեալ մեծաձայն գոչէին . Մեռցի որդի անգութն անըզգումն Ոդիսեայ , որոյ նենգութիւնքն և դարանք կործանեցին զքաղաքն Տրովացւոց : Յայնժամ Ակեստէս ասէ . Որդիդ Ոդիսեայ , ոչ կարեմ ես զլանալ զարիւն քո ուրուականաց ոգւոց այնշափ Տրովացւոց զորս հայր քո գահավէժ արարեալ ընկէց յափունս Սեաւն Կոդիգեայ . Կորնչելոց ես գու և որ քեզդ առաջնորդէ : Նոյն ժամայն այր մի ծեր յամրոխէ անտի առաջի առնէր արքային զենուլ զմել ձօնիս ի վերայ չիրմին Անքիսեայ : Արիւն նոյց հաճոյ լինիցի , ասէ , ուրուականի դիւցագինն այնորիկ . և հնէաս գլխովին , յորժամ իրազեկ լիցի զնուիրաց զոհիդ , ուրախ լինիցի թէ դու եւս սիրես գգուես որ ինչ նմա մեծագնի էր յաշխարհի :

Ամենայն բազմութիւն ժողովրդեանն ծափս հարեալ յարէին միաբան հաւանութեամբ ի խորհուրդ ծերոյն . ոչ ինչ ունէին այլ ի մոտի , բայց զի զենուցուն զմեզ : Կազմեալ պատրաստեալ էին տանել զմեզ ի վերայ չիրմին Անքիսեայ , ուր կանգնեալ էին սեղանք երկու և վառեալ հուրն նուիրական . սուրն որ հաստանելոց էր զպարանոցս մեր՝ կայր հանգէպ աչաց մերոց : Պսակօք ծաղկանց զարդարեալ էին ըզգլուխս մեր , և չէր մեզ այնուհետեւ արդահատութիւն ինչ և գութ ակն ունել յումեքէ՝ ազատելոյ զկեանս մեր : Վճարեալ էր ամենայն ինչ վասն մեր . բայց Մենտոր հանդատագոյնս , առանց յոյզս ինչ կարեաց յայտ առնելոյ , խընդրեաց խօսել ընդ արքային : Ասէ . Ով Ակեստէս , եթէ աղքտք պատանւոյդ Տելեմաքայ , որ զէն երբեք չէ ամբարձեալ ի վերայ Տրովացւոց , չկարեն ածել զքեզ ի գութ , գոնեաշահ անձին քո գրդեսցէ զքեզ : Գիտութիւնն զոր իմ ստացեալ է զհմայից , զմակատագրէ և զ՛րամանաց Դիյ՝ զգացուցանէ ինձ թէ չեւ անցեալ երից աւուրց՝ ազգք խուժադուժք , բարբարոսք եկեսցեն ի վերայ ձեր . իշեալ ի բար-

ձուէ լերանցդ այդոցիկ իրեւ զհեղեղատ տարածեսցին ասպատակել քանդել զամենայն երկիրդ և հարթյատակ առնել զբաղաք բնակութեան քոյ։ Արդ փութա կանխել զարշաւանն նոցա . զօր ժողովեա , գունդ կազմեա , վառեալ զինեա զմարդիկ աշխարհիդ . ժողովեա , առ ի մէջ քաղաքորմիդ գհօտս և զանդեայս քո որք կան յարուարձանեայս։ Եթէ գուշակութիւնքս իմ վրիսեալ ի դերս ելանիցեն , համարձակ լիցի քեզ յետ երից աւուրց զենուլ խողխողել զմեզ . բայց եթէ , հակառակ այդմ , ձգրտեսցին բանք իմ , յայնժամ յուշ լիցի քեզ՝ թէ չէ արժան զարեւ հատանել զայնոցիկ յորոց կեանք քեզ չնորհեալ իցեն։

Զարմանայր Ակեստէս ընդ բանսն զոր խօսէր ընդ նմա Մենտոր այնչափ համարձակութեամբ զոր չէր նորա տեսեալ յայլում ումեք ի մարդկանէ . Պատասխանի տուեալ նմա ասէ . Քաջ իսկ տեսանեմ , ով այրդ օտարական , զի Դիք չեն առատացեալ ի քեզ բարեօք և ընչիւք , բայց չնորհեալ են քեզ իմաստութիւն որ պատուականագոյն է քան զամենայն մեծութիւն։ Հրաման տայր միանգամայն յապաղել զպաշտամունս զոհիցն և պատրաստել կազմել մեծաւ փութով և կալընդդէմ արշաւանին զոր Մենտոր գուշակէր։ Անդ էր տեսանել կանայս պակուցեալս յերկիւզէ , ծերս կորացեալս կորաքամակս և մանկտի մատաղ՝ արտասուք յաչս , որ յամենայն կոզմանց դիմէին մտանել ի քաղաքն։ Ընդ ոչխարս խառն և արջառք դիմէին բառաչելով ի քաղաքն , քեւալ զարօտսն պարարտս . և մակաղատեղիք բաւական ոչ գտանէին նոցա առ ի կալ յամրի։ Լսէին անդ յամենայն կոզմանց գոչիւնք և աղմուկ աղաղակի խուժանին որ մղէին զմիմեանս և ոչ իմանային այր զընկեր իւր և ի շտապի անդ զանծանօթ ոնմ՝ բարեկամ համարէին . և ամենեքեան խուռնընթաց համագունդ ընթանային և ոչ գիտէին ուր ուղէին ոտք իւրեանց . Բայց մեծամեծք քաղաքին , որ զանծինս առ իմաստունս ունէին , համարէին թէ խարեբայ ոնմ է Մենտոր . և զի զկեանս իւր ապրեցուցէ՝ հնարի հնարս կանխագիտութեան։

ԹՈՒՂԹ ԱՌ ԽՆԱՄԱԿԱԼՔ ՃԱՇԱԼ ՀԱՆԴԻՍԻ ,

Տեարք Խնամակալք Ճաշալ Հանդիսի ,
ի Կ. Պողիս .

Յամէ ինչ հետէ ընթեռնում զՃաշալ ձեր և չգտի պարապ պատեհ ի յայտ առնել զիսորհուրդ իմ զայնմանէ ։ Վերջին թիւ նորին ամին անցելց երեւոյթու իմն ցուցանէր դադարման . այլ քանզի ի չորից թուոց տարւոյս որք անագան և ի նմին աւուր եկին հասին առ իս՝ իմանամ զի չէ խափանեալ Հանդէսդ , խնդակից սրտիւ մաղթեմ նախ յաջողութիւն և տեւականութիւն գրական աշխատութեան ձերում :

Արդարեւ գովելի և օգտակար յոյժ է գործն յոր ձեռն արկեալ էք . և թէպէտ նորօրինակ ինչ նորասիրաց ժամանակիս երեւեսցի այն , սակայն ձեր ծառայութիւն ոչ վասն նոցա է որ զիինն մոռանալ կամին առ հնութեանն միայն , այլ վասն այնոցիկ որ զպատշաճն խնդրեն հանդրազ և զգեղցիկն : Եթէ հին լեզուք անկարեւոր էին , ոչ մի ի նշանաւոր տէրութեանց եւրոպացւոց դպրոցս հին լեզուաց հաստատէր , յորս առանձինն Հայերէն լեզու ունի զիւր ուսուցիչս և զուսանելիս : Ապա եթէ Վ. Լանկլուա , Լակարտ , Հիւալշման և այլք , գիտունք օտարք , ուսեալ են կամ ուսանին զշայ բարբառ , թէպէտ ի քննել զալերս նորին ի համեմատական լեզուաբանութեան , թէպէտ վասն այլոյ նապատակի , և ուսանին զիինն զոր էրաբան կոչեմք , որոյ ոչ գոյ այլայլութիւն որչափ արդի հայերենին՝ այսինքն ալիտրհաբուրէն է , ոչ ապաքէն առաւել ուսանել պարտ է Հայոյն զայն լեզու որով աւանդեալ են նման նախնիք զպատմութիւն ազդին և զվարդապետութիւնս կրօնից նորա : Ո՞րչափ մորմոքեալ էր իմ արդեւք , յորժամ ընթերցեալ զհայ արձանագիրս որ երբեք երբեք ընդ առաջ ինձ ելանեն ի գաշտայինն կիրիկիա , ուր եմ այժմ , չառնուի ի միտ ողջ և ճշդիւ զոր ինչ նոքայն բովանդակեն : Արս ոչ բազումն սակայն տեսի յԵւրոպա որ խօսակից լինէին ընդ միմեանս ի լատին բարբառ զոր մէտեալն անուանեմք . միտք նոցա , որպէս թուի ինձ , չէին յարուցանել զմեռեալս այս կարե-

ւոր էր նոցա առանց տարակուսանաց . յայն սակս մինչեւ
ի թերանս իւրեանց ընդելացուցանէին զայն զոր ակն նոցա
ի գիրս միայն տեսանէր : Քանի՛ սակաւք են յազգի անդ
մերում այնպիսիք որ ասել ինչ մարթայցեն ի հին լեզու Հա-
յոց , նա ի դասս իսկ դաստիարակաց որոց պաշտօնն է ու-
սուցանել գոնեայ զբարբառ աւետարանի ասքանազեան ման-
կըտոյն : Զէ իմ յօժարութիւն պնդեալ յամառել աստին՝
եթէ թողուլ պարտ է զարդի հայերէնն , որ անհնարին եւս
է , և վարել միշտ հնովն . բայց քանզի , որպէս ջատագովք
արդի հայերենի հաստատեն , առ ի գրել ինչ առանց վրի-
պանաց այժմու հայերենին՝ տեղեկութիւն հնոյն պիտի , նմին
իրի գիտել արժան է զհինն հայերէն , գիտել քաջ և գի-
տել զընտիրն :

Դեւարք Խնամակալք , որ առաջի ազգին արկեալ
էք զձաշակ ձեր իբր օրինակ ընտիր մատենագրութեան Ե-
դարու , միջնորդ կացէք որոց միանգամ կամիցինն հրա-
հանդել ի լեզու Մեսրոպայ , այնու զի զնորա և զնորին յա-
ջորդացն ասացածս յերիւրէք հաւատարմութեամբ ի Հան-
դիսի ձերում , մատուցեալ միանգամայն փոփոխութիւնս նիւ-
թոց առ ընթերցանելիս , որոց դժուարին թերեւս էր ստա-
նալ զամենայն դպրութիւնս ոսկի դարուն և առ ի նմանող
լինել նոցին՝ զննել մի առ մի համբերութեամբ : Հ. Ա. Բագ-
րատունի , որ կոթող իսկ հայերենագիտաց կոչեցաւ յոմանց ,
յորդորէ զորս զհին հայերէնն ուսանիցին՝ չհեռանալ ի ձեւոյ
լեզուի մատենագրաց այսր ժամանակի . բայց զարմանք են ,
ի գրուածս իւր նա ինքն ի կիր զայդ ոչ արկանէ : Նոյնպէս
Հ. Ե. Հեւրմիւզեան , թէպէտ համի բնութեամբ ընդ կարգումն
անուանց և ընդ դարձուածս բանից Սեբերիանու , Եղնկայ ,
Ուկերերանի , այլովքն հանդերձ , սակայն և այնպէս այլ իմն
կերպարանս տայ իւրում լեզուի , որ օտար է յոսկեղէն ո-
ճոյ : Հարգս այսոքիք մեծանուն են ճշմարտիւ վասն հմտու-
թեան իւրեանց Հայ լեզուի . այլ խոստովանութիւն նոցա պի-
տոյ էր մեզ և ոչ արարքն գրաւոր յորս չտեսանի նմանու-
թիւն ընդ ընտիր դպրութեան , թէպէտ չէր իսկ անհնարին
ինչ այս առ նոսա : Գիտեմք սակայն ընկերութիւն մի (Միի-

թարեանք Վիեննայ,) որոյ անդամքն գրեա թէ յիսուն ամօք յառաջագոյն փոխեալ զլսոնարհագոյն լեզու իւրեանց՝ գրեն ցայսօր ժամանակի ըստ օրինակի թարգմանչացն առաջնոց , որոց զհետ գնան առ հասարակ մեծաւ մտադիւրութեամբ : Ապա չեն կարի սակաւք որ ճանաչեն զուղիղն և զվայելուչ , և նմանին այնմ ճարտարութեամբ :

Պարտ է ձեզ ապա , Տեարք Խնամակալք , որ յանձն առեալ էք ցուցանել ազգին զմաշակ ոսկեղէն դպրութեան , ի լոյս հանել զգաղտնիս վայելչութեանդ այդորիկ և մեկնել զօրէնս յօրինուածոյ նորա : Յետ վախճան տալոյ պատմութեան Հայ մատենագրութեան ի Հանդիսիդ՝ խօսեսջիք զյօդելոյ անուանց , որոյ արուեստին առաւել իմն կարօտեն որք կամիցինն գրել ինչ զգուչութեամբ : Ցուցէք թէ ընդէ՞ր սարուածաբանունիւն անունդ չէ ընտիր և հարաբերաբանունիւն հարազատ , կամ ընդունելի է փառաբռնիւն այլ խոտան բացաբռնիւն , և որ սոցին սակի իցեն : Բաց աստի , եթէ արժան դատիցիք , յորժամ ի գլուխ ելանիցէ «Առանձին բանք Հայերէն լեզուի» դիք ի տեղի նորա կամ այլուր զանուանս և զբայս դարուցն վերջնոց և հանդէպ նոցին յայտ արասջիք զստոյդն : Օրինակ իմն . Բարձրունիւն , համեմատութիւն . Հականառել , վիճել , այլովքն հանդերձ , որք կարի օգտակար լինիցին առ այնոսիկ որ զնչգութիւն անուան իրիք խնդրիցեն :

Խնամ տարջիք հուսկ ուրեմն մշակութեան այդր լեզուի՝ փրկելով զնա նախկին անարտառութեամբն ի միջոյ խառնակութեան և ապականութեան ժամանակիս : Ի յայտ ածէք զնչգրիտն , մերժեցէք զիսորթն . տուք տպադրել ի Հանդիսի ձերում , որպէս և առնէքդ երբեմն , հատուածս ի Լամարդինայ , ի Բասգալայ , ի Հիւկօյէ և յայլոց՝ թարգմանեալ զամենեսին լեզուաւդ այդուիկ զոր հինքն , եթէ էին կենդանի , իմանալոց էին հեշտեաւ իրեւ զնորս : Այս , արարէք զայս ի ցուցանել հակառակորդաց ձերոց թէ բաւական է ամենայնի դպրութիւնն Ե . դարու :

ՈՌՈՒԲԻՆ Յ. ՊԱԼԵԱՆ

Ուսուցիչ գաղղիերենի ի Պետական վարժարանի
յԱտանա , ի 10 Մայիսի , 1887



ՕՐԵՆՔ ԵԳԻՊՏԱՑԻՈՅ ԴԱՏԵԼՈՅ ԶԹԱԳԱԽՈՐԾ
ՑԵՏ ՄԱՀՈՒԱՆ ՆՈՅՆ.

Սեսոստրիս , զառաջինն , աշխարհակալ հըզօր ,
Յեգիպտոս ի ծաղանս հանէր հանապազօր
Թագաւորս աշխարհաց բազմաց երկաթակապ :
Այլ յերկրին որ ուսմամբ էր այնպէս հոյակաս՝
Այն մանաւանդ էր մեծ , զի օրէնք հանապազ
Թագաւորաց իսկ կայր յետ մահուն դատախազ :
Ո՞ւր գեղեցիկ բան զայս հանդէս երեւեցաւ ,
Կոչել ի հարցափորձ Թագաւոր անիրաւ
Ոչ Եգիպտոսի լոկ , համաշխարհի անզամ
Յանդիման՝ ի լրսել յաւիտենից պատզամ :
Վըճիռ . ժողովրդղեան է վըճիռ . աստուածոց :
Ուրուական նորա կայր գերեզմանին ի ծոց՝
Դարուն եւ յաւիտեանց որոտալոյ վըճիռս
Ի դող եւ ի սարսափ ունին եղեալ յակճիռս :
Անդ չգոյր փաղաքուշ , ոչ զինուց շկանիւն ,
Զիշանութեան տեղին ունէր արգարութիւն :
Աղբատին արտասուր հեղեալք ցայնժամ ընդ վայր ,
Զըրկեալն յանիրաւի , բողոքել անզըր գայր :
Հըպատակաց տըրուան էր դառըն դատաւոր ,
Ոմիրն ի թագէն մերկ կայր անդէն ակընկոր .
Մինչ առաքինութիւն սուրբ շիրմին առընթեր
Ի բոց ջահուն մահուան արծարծէր զիւր լապտեր :
Բի՛ր երանի յայնժամ այնմիկ որ ընդ թագաւ
Անձամբ անձին խըստի կալ դատաւոր ուսաւ ,
Ոյր անունն էր օրհնեալ , արրունիքն անարատ .
Ի պատրանաց փառաց , յողաքանաց ազատ ,
Ո՞վ թագաւորք , այլ եւս չիր ատեան այնպիսի .
Ահաւոր յերկիւզ ծեզ ի տալ պատախանի .
Գոն սակայն դատաւորք բան զյայնժամուսն ահեղ ,
Որոց արդարութեանն իցէ մարթ դընել մեղ .
Կամ իշխեսցէ զնոսա խարել ուկւոյն շողիւն :
Դատաւորքս են երկու , խիղճ ծեր եւ պատմութիւն :

ԱՐԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԵԿԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՀԱՅԵՐԻ

Գ.

ԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼ. հրամանակութեան ժըսւածու ճըս յայտաբարութեան ճըս է պես հասարակաց դնել, կախել, փախել: *ի վերայ աշտարակացն արձանս հրամայէր կանգնել, և գիր հաստատել, հրաման տալ սաստկութեամբ:

Ի ԳԻՐ ՀԱՐԿԱՆԵԼ. Ի ԳԻՐ ՀԱՐԿԱՆԵԼ. ի էլլ առնել. ժըսւածութել: *Գումարեա զամենայն և ի գիր արկ: — *Եթէ դու գրեսցես, Աստուած ջնջէ. իսկ եթէ դու ոչ գրեսցես, Աստուած ի գիր արկանէ: — *Եւ ի գրի հարեալ մի ըստ միոջէ այսպէս պատմէ:

Ի ԳԻՐ ԱՆԿԱՆԵԼ. ԸՆԴ ԳՐՈՎ ԼԻՆԵԼ. ժըսւել. ժըս առնել: *Ու արժանաւորեցաւ մեծատունն ընդ աղքատին ի գիր անկանել: — *Քանզի ընդ գրով չեն կրօնքն, երբեմն զայս ասեն . . . և երբեմն զայն:

ԳԻՐԿՍ ԱՐԿԱՆԵԼ. ժրիել. ողջադութել. ժանիստուել: *Ընթացաւ Եսաւ ընդ առաջ նորա, գիրկս արկ նմա . . . և համբուրեաց զնա: — *Մեծարեա զնա, և գիրկս արկցէ զքե: — *Աստ արկեր զգազիւ գիրկս . բայց թէ ժողովել կարիցես, մեծ զարմանք իցեն:

ԸՆԴ ԳԻՐԿՍ ՄՏԱՆԵԼ. աղեղը ժաշել. ներ ներել: *Ընդ գիրկս եմուտ, և եհար զՅովրամ ընդ մէջ թիկանց նորա. և ել նետն ընդ սիրտ նորա: — *Մուտ ընդ գիրկս իւր իբրև զթշնամի:

Ի ԳԻՐԿՍ ԹԱՓԵԼ ԶՈԳԻՄ. բուշը առժով աղեղը լորել: *Յարձակեցաւ ի վերայ Բաքիդեայ. այն ինչ լինէր զոգիսն ի գիրկըս իւր թափել, և նա յետս կոյս կործանեցաւ:

ԳԻՐԿ ԸՆԴ ԳԻՐԿ ԽԱՌՆԻՄ. իբրու ժանիստուել. մնամաբարել. իսունառութ ըլւա դարեբաղչի մէջ: *Գիրկ ընդ գիրկ խառնեցուք . . . շաղեալք պատեսցուք ընդ սէր: — *Յորժամ գիրկ ընդ գիրկ խառնիցին, ցուցանիցէ թէ որպէս պարտ իցէ կոռուել և յաղթել:

ԱՌ ԶԳԻՒՏ . ԽԵՐԱԿԱՆԵՐԸ . ԽԵՎԱԾՎԱՆ : * ԸՆԴ ՆՈՐԱ առնէին
թագաւոր զԱնտիպատրոս . . . առ չգիւտ արքունական ազգին:
Ի ԳԼՈՒԽ ՀԱՆԵԼ . ՏԱՆԵԼ . Կառաբել . ՔՄԵՒ հանել : * Ի ԳԼՈՒԽ
հանի . . . զիրամանն արքունի : — * ՈՌԱՀԱ ի գլուխ տարցի զիրս :
Ի ԳԼՈՒԽ ԵԼԱՆԵԼ . ՄՆԱԼ . ՔՄԵՒ Ելք : * Ի ԳԼՈՒԽ ԵԼ ողիմ-
պիադն : — * Ապա թէ զգօնութեամբ ընթեռնումք և ի գլուխ
ելանեմք , բազում օգուտս շահիմք անտի :

ԶԳԼԻՈՎ ԱԾԵԼ . ՔՄԵՒ ԹԱՌ : * Զիր սամցրսն զգլիսովն
ածեալ՝ զդէմն երեսացն ծածկէր :

Կամ' հանել . ՆԵՐԻՄՆԵԼ : * ԱՆԴԷՆ հրամայեաց զգլիսով ա-
ծել զծիրանիսն Անդրոնիկեայ :

ԳՆԱԼ ՄՐՏԻ . ՔՄԵՒ ԳԴԱԼ : * ՈՉ սիրտ իմ գնաց , յոր-
ժամ դարձաւ այրն ի կառաց անտի ընդ առաջ քո :

ԳՈՂԱԿԱՆ ԶՄԻՒՏ , ԶՄԻՐՏ . ԽԱՅԵԼ : * Կամեցաւ զմիտսն
զուարթնոցն գողանալ : — * Գողացաւ Ցակոր զսիրտն Ղարանու:

ԳՈՅԵԻ ԻՒՐՈՎ . ԶԱՓ . ԲՆԴՆԻՐԱԿՈՎԵՆ : ԲՆՈՅ : * Անբաւ է
մարդոյ տեսանել զԱստուած գոյիւ իւրով : — * Լցից նոքօք
զաշխարհ գոյիւ իւրով : — * Զամենայն ինչ զոր ունէր՝ արկ
գոյիւ չափ զեեանս իւր :

ԳՈՅԺ ԱՌՆԵԼ . ԱՐԿԱՆԵԼ . ՏԱԼ . ՔՄԵՒ ԲԵՐԵԼ * Գոյժ-
կան գուժկանի դիպեսցի , գոյժ առնել թագաւորին Բաբե-
լացւոց՝ թէ առաւ քաղաքն նորա : — * Ամուտ այրն գոյժ ար-
կանել ի քաղաքին : — * Գոյժ արկէք զայս ազգաց : — * Գոյժ
տուք ի Հրէաստան , լու լիցի յԵրուսաղէմ : — * Յաւուրն յայն-
միկ գայցէ ապրեալն առ քեզ՝ տալ գոյժ յականջս քո :

ԳՈՐԾ ԱՌՆԵԼ . ՔՄԵՒ ՁԵՆԵԼ ԲԱՆԵԴՆԵԼ (յօդուա անցն :) * Գործ
արասցուք զյամելն վրիժուց (առ յԱստուծոյ ,) ամենեւին
յանհնարին տանշանացն ապրելոյ :

Ի ԳՈՐԾ ԱԾԵԼ . Կառաբել : * Ի գործ ածեալ , և արդեամբք
անդրէն կատարէր : — * Ի գործ ածել զխորհուրդն :

Ի ԳՈՐԾ ԱՐԿԱՆԵԼ . ՔՄԵՒ ԸՆԵԼ . ՔՄԵՒ ՁԵՆԵԼ : * Բայց ես և
ոչ զմի ինչ յայսցանէ արկի ի գործ : — * Եթէ զպատուհաս
իւր ի գործ ոչ արկանիցէ :

Ի ԳՈՐԾ ԱՆԿԱՆԵԼ . Է ՔՄԵՒ ՔՄԵՒ : * Ի գործ
անկանի , և կատարի տաճարն առ Դարեհիւ :

ԶԵՌՆ Ի ԳՈՐԾ ԱՐԿԱՆԵԼ, ԱՌՆԵԼ. ՅԵՎ+ ՊՐԱՆԵԼ. ԱԿԻՒՆ:
 *Երթալ, ձեռն ի գործ արկանել, և զտեղին շինել: — *Այս
 ինչ լինէր նոցա զանաշառ զանողորմ ձեռն պատերազմի ի
 գործ արկանել: — *Ձեռն ի գործ առնէին, ոմն վէմն՝ ոմն
 վիրդս . . . յարձակելոցն ի վերայ արկանէին: — *Պատրաս-
 տեցէք զգէնս, զի ձեռն ի գործ արար:

ԸՆԴ ԳՈՐԾ ՄՏԱՆԵԼ. բանեցաւէլ (ԵՒԿԵ ՀԵՐԵԼ-): *Առցէ
 ծերակոյտ քաղաքին այնորիի երինջ մի յարջառոց՝ որ ընդ
 գործ չիցէ մտեալ, և լուծ չիցէ ճգէ ճգէալ:

ԳՈՐԾՈՎ. ՔՐԵԴԻՆ. ԷՐՈՒ: *Գործով գիտասցէ և ծանիցէ
 զորշումն գիտութեան բարւոյ և չարի:

ԳՈՐԾ ԸՆԴ ԳՈՐԾՈՎ. ԵՒՐԵՐԴԱԲԱՐ. ՎԵՐ Է ՎԵՐՈՒ: *Այս ա-
 մենայն (հոգեւորն) լիցի եղեալ գործ, և այն ամենայն
 (մարմնաւորն) գործ ընդ գործով:

ԱՐԿԱՆԵԼ ԳՈՒԹՍ ԱՌԱՋԻ ՈՒՐՈՒՔ. իւղճ նախել. պաղա-
 պէլ. ժնաւ-ընէն հայցել: *Արկանեմք զգութս մեր առաջի քո:
 — *Արկի գութս առաջի արքայի:

ԱՆԿԱՆԵԼ ԳԹՈՅ. ՔԻՐԱՆ ՎԵՐ Է ՔԱՆ- շարժել՝ իշճալ: *Ասեն
 յերեմիա մարդարէ. Անկիցի գութս մեր առաջի երեսաց քոց
 (Քիւ՝ Քր վայ), և կաց յաղօթս վասն մեր առ Տէր Աս-
 տուած քո:

Կամ՝ սէր յէել (Քիւ-ն): *Աղաչեաց կին առնուլ ի նմա-
 նէ, զի գութս անկիցի և զաւակ խառնեսցի: — *Անկաւ գութ-
 ի բանիցն ի սիրտս նոցա:

Ի ԳՈՒԹՍ ԻԶԱՆԵԼ. ԱՆԿԱՆԵԼ, ՀԱՐԿԱՆԵՄ, ԿԱԼ.
 Ճնին վրայ ժալ. լուիլ: *Ամենայն այր իսրայելի . . . ի գուճս
 իջեալ առաջի տաճարին Տեառն աղաչէին: — *Ի գուճս իջ-
 եալ ամենայն ժողովուրդն երկրին երկիր պագանէին: — *Ի
 գուճս եւս անկանէր, որպէս և մեւս աւետարանիչն յայտ
 առնէ: — *Չորքոտանիքն որ ոչ իցեն գազանք, յորժամ
 ի գուճ հարկանիցին, զառաջին ոտսն ընդ պորտիւն ամիո-
 փեն: — *Յարեաւ յերեսաց սեղանոյն Տեառն, ուր կայր ի
 գուճս ի վերայ ծնդաց իւրոց:

Յ. Գ.

ՊԱՅՄԱՆՔ

Ա. Գին միամեայ բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դաւ-
հեկան ոսկւոյ , հատուցանելի կանխաւ .

Բ. Ծախք թղթատարի ի գաւառս և յերկիր օտար՝
դաշեկան արծաթոյ 6 ի տարւով .

Գ. Զգին բաժանորդութեան , զթուղթ և զամենայն
գիր առաքել պարտ է , յանուն խնամակալաց Հանդիսիս ,
առ Տ. Յովսէփի Գավաֆեան , գրավաճառ ի Կ. Պոլիս , ի
Զաքմաքնըլար .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3
դաշեկանաց առ ամենայն գրավաճառ Կ. Պոլսոյ :

م د ر د ب د ب

ب ر ب ب ب ب ب ب